ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ,

1 փող. 38, Հեռ. (0222)63539

N 505
*29 դեկտեմբեր 2017թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլոյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջներով, Ձեզ է ներկայացվում համայնքի ղեկավարի որոշումները 2017թ-ի դեկտեմբերի 25-ից դեկտեմբերի 29-ը ընկած ժամանակահատվածի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Կատ.՝ Ա. Պետրոսյան*
*Հեռ. 22263539*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 331-Ա

## 2017ԹՎԱԿԱՆԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՎԵՐԱԲԱԽՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ

1. Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի բյուջեի ապարատի 4111 հոդվածի /բաժին 1 խումբ 1 դաս 1/ նախատեսված գումարից 20.0 /քսան հազար/ դրամ և ապարատի 4264 հոդվածի /բաժին 1 խումբ 1 դաս 1/ նախատեսված գումարից 30.0 /երեսուն հազար/ դրամ տեղափոխել նվիրատվության 4819 հոդված /բաժին 8 խումբ 4 դաս 2/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017թ դեկտեմբերի 25

գ.Բալահովիտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 332-Ա

## <<ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և հիմք ընդունելով <<Երկրապահ Կամավորների միության>> հասարակական կազմակերպության Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի մասնաճյուղի նախագահի 2017թվականի դեկտեմբերի 13-ի ԵԿ -1 N 164 գրությունը, որոշում եմ

1. Բալահովիտ համայնքի բյուջեի <<Հասարակական կազմակերպության աջակցություն>> 4819 հոդվածից /բաժին 8 խումբ 4 դաս 2/ 50000 /հիսուն հազար դրամ/ փոխանցել <<Երկրապահ Կամավորների Միության>> հասարակական կազմակերպության Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի մասնաճյուղին, որպես ֆինանսական օգնություն զոհված և վիրավորված ազատամարտիկների ընտանիքներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2017թ դեկտեմբերի 25

գ.Բալահովիտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 333-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել <<ԳՈԼԴ_ԿՈԼԱ>> ՍՊԸ-ի իրավահաջորդ <<ԱԿՎԱՅԱՆ>> Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությունը հաստատված /նոր խմբագրությամբ/ պետ.ռեգիստրի վկայական 03Ա067278 ներդիր 010 հաստատված 2016թվականի դեկտեմբերի 22-ին տնօրեն Աշոտ Ալեքսանդրի Չիլինգարյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել <<ԱԿՎԱՅԱՆ>> ՍՊԸ-ին պատկանող՝ Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր / վկայական N 1506998/ /ծածկագիր 07-018-0111-0017/, Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2/1 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի /վկայական N 2306874/ /ծածկագիր 07-018-0111-0018/, Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2/2 բնակավայրերի հասարակական կառուցապատման /վկայական N 2306883/ /ծածկագիր 07-018-0111-0012/ հողերի, <<Գույքաչափ>> ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված ինքնակամ կառուցված շինություններով:
Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և <<Գույքաչափ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ <<ԱԿՎԱՅԱՆ>> ՍՊԸ-ին պատկանող՝ Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2, Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2/1, Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2/2 հասցեների հողամասերում 2005թ, 2009թ, 2017թ-ին ինքնակամ կառուցվել է արտադրամաս արտաքին մակերեսը 716.3ք.մ /արտադրական/, պահեստ արտաքին մակերեսը 600.2ք.մ /արտադրական/, պահեստ արտաքին մակերեսը 75.94ք.մ /արտադրական/, պահակատուն արտաքին մակերեսը 30.16ք.մ /հասարակական/, բաց էլ.ենթակայան արտաքին մակերեսը 25.2ք.մ /արտադրական /, պարիսպ արտաքին մակերեսը 12.11ք.մ /հասարակական/, պարիսպ արտաքին մակերեսը 27.47ք.մ /արտադրական/:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի,

Բալահովիտ համայնքի փողոցների և տների համարակալման վերաբերյալ 2006թվականի օգոստոսի 14-ի թիվ 6 որոշումը և Բալահովիտ համայնքի ավագանու 2011թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 44-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9, 10, 11 և 15 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ <<ԱԿՎԱՅԱՆ>> ՍՊԸ-ին պատկանող վերը նշված հացեների հողակտորների վրա ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ

1. <<Ակվայան>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատեսքի հասցեն՝ Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2 /սեփականության իրավունքի վկայական N 1506998/ հողամասի չափը 0.45հա /ծածկագիր 07-018-0111-0017/, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողատեսքի հասցեն՝ Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2/1 /սեփականության իրավունքի վկայական N 2306874/ հողամասի չափը 0.1738հա /ծածկագիր 07-018-0111-0018/ և բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատեսքի հասցե՝ Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2/2 /սեփականության իրավունքի վկայական N 2306883/ հողամասի չափը 0.0504հա /ծածկագիր 07-018-0111-0012/ տրամադրել նոր միասնական հասցե՝

Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղիթիվ 2-2/2:
Հողամասերի ընդհանուր մակերեսը՝ 0.6742հա, որից 0.6238հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, 0.0504հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր:

2. <<ԱԿԱՎԱՅՆ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2-2/2 հասցեում ինքնակամ կառուցված <<Գույքաչափ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված արտաքին մակերեսներով ինքնակամ կառույցները համարել օրինական:
3. Սահմանել որ <<ԱԿՎԱՅԱՆ>>ՍՊԸ-ն

1/սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Բալահովիտ համայնքի բյուջեի N 900105206214 պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 4734630դրամ /չորս միլիոն յոթ հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր երեսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ, որպես օրինականացման վճար:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառուցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017թ դեկտեմբերի 28
գ.Բալահովիտ